ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 25.01.2018թ.

ՄԻՋԱՆԿՅԱԼՈՐՈՇՈՒՄ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի
թիվ ՍՑ-ԱՄ-2017/81

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, հիմք ընդունելով ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանի 26.12.2017թ. թիվ ԱՎԴ/3176/02/17 քաղաքացիական գործով հայցի ապահովման միջոց ձեռնարկելու մասին որոշումը, ինչպես նաև հաշվի առնելով 26.12.2017թ. տրված թիվ ԱՎԴ/3176/02/17 կատարողական թերթի հիման վրա ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության Արարատի մարզային բաժնի կողմից թիվ 03934917 կատարողական վարույթ հարուցելու մասին 10.01.2018թ. որոշումը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 99-րդ հոդվածի, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇԵՑ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.11.2017թ. թիվ 03/26-3/21823-17 գրությամբ «Նորակ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԱՄ-2017/81 պաշտոնական ընթացակարգը կասեցնել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ